ՁԵՐ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ

Վկայագրի հիման վրա՝

- ծնողը պետք է դիմի դպրոց,
- ծնողի մասնակցությամբ երեխայի համար կմշակվի անհատական ուսումնական ծրագիր,
- յուրաքանչյուր տարվա համար կհատկացվեն ուսումնական նյութեր,
- կտրամադրվեն ուսուցիչներ,
- կկազմակերպվի տնային ուսուցումը:

Տնային ուսուցումն իրականացվում է

անհատական ուսուցման տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների ուսումնական պլանով, որը ներառում է տասից ավելի առարկա իրենց համապատասխան շաբաթական ժամաքանակով:

ԵԹԵ Ձեր երեխան ֆիզիկական խնդիրների պատճառով չի հաճախում դպրոց

ԵԹԵ չգիտեք ում դիմել տնային ուսուցման իրավունքից օգտվելու համար

ԵԹԵ դպրոցը չի իրականացնում կամ թերի է իրականացնում տնային ուսուցումը

ԵԹԵ ունեք խորհրդատվության կարիք

ԴԻՄԵՔ ՄԵԶ

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ

ք. Մարտունի, Պռոշյան 8

+374 94 21 13 96

Սույն բուկլետը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային գործակալության միջոցով և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Բուկլետի բովանդակության համար պատասխանատու է «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ

ՊԱՀԱՆՋԱՏԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ. ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ հաճախել չկարողացող երեխաների ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2017

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուրն ունի կրթություն ստանալու իրավունք:

Բոլորի, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը և հավասար կրթության իրավունքը ապահովելու նպատակով Հայաստանում իրականացվում է անցում համընդհանուր ներառական կրթության:

ԻՆՉ Է ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ներառական կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և դրանց կարիքը չունեցող անձանց համատեղ ուսուցումն է՝ առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով:

Ներառական կրթությունն իրականացվում է հանրակրթական և հատուկ հանրակրթական դպրոցներում, սակայն կան դեպքեր, երբ ուսուցումն իրականացվում է.

- **հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում,** եթե անձը երկարատև՝ ոչ պակաս, քան 21 օր, ստացիոնար բուժում է ստանում:
- **տանը,** եթե առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես կամ մշտապես սովորողները ուսումնական հաստատություններ չեն կարող հաճախել:

Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդություններն են՝

1. հոգեկան խանգարումներ, վարքի խանգարումներ
2. նյարդային համակարգի հիվանդություններ
3. բնածին շեղումներ (զարգացման արատներ, դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ)
4. այլ օրգան-համակարգերի խանգարումներ:

Տնային ուսուցման իրավունք վերապահող **հիվանդությունների ցանկը** սահմանված է ՀՀ կառավարության կողմից *(տես ներդիրը)*:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներառական կրթության համար անհրաժեշտ է

ա. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից

բ. Ծնողի ներգրավմամբ Անհատական ուսումնական պլանների մշակում (ԱՈՒՊ)

գ. Ուսուցման գործընթացն ապահովող ուսուցիչներ, մասնագիտական թիմ

դ. Նյութատեխնիկական ապահովվածություն

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններն իրականացվում են երեք մակարդակով՝

I. դպրոցական մակարդակ
II. տարածքային մակարդակ
III. հանրապետական մակարդակ

ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.
1. դպրոցական մակարդակի Գնահատում,
2. տարածքային մակարդակի Գնահատում

Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում, դպրոցի տնօրենի հրամանով հանձնարարվում է աջակցության խմբին իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի Գնահատում:

Եթե երեխայի դպրոցական մակարդակի Գնահատման արդյունքները վկայում են երեխայի որևէ ֆունկցիայի խանգարում, ապա ծնողի կամ ուսումնական հաստատության կողմից Տարածքային կենտրոնին ներկայացված դիմումի հիման վրա վերջիններիս կողմից իրականացվում է գնահատում՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը (1-ից 4-րդ) և դրանով պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Գնահատումը իրականացվում է երեխայի կենսագործունեության **բնական միջավայրում՝ ծնողի մասնակցությամբ** (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում):

Արդյունքում՝ Տարածքային կենտրոնի կողմից տրված **Գնահատման արձանագրությունը և Գնահատման արձանագրությունը** ծնողը ներկայացնում է երեխայի կրթության վայր հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենին, որն առավելագույնը **5-օրյա ժամկետում դիմում է մարզպետարան**, որը փաստաթղթերի հիման վրա տալիս է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը հավաստող **վկայագիր**:

Տարածքային կենտրոնի գնահատման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում ծնողը կարող է **արդյունքները բողոքարկել** Հանրապետական կենտրոն: